ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի սեպտեմբերի 21-ից 22-ը Պորտուգալիայի Հանրապետություն կատարած այցի վերաբերյալ

Անուն Ազգանուն, զբաղեցրած պաշտոնը
Արտեմ Ասատրյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Գործուղման վայրը և ժամկետները՝ Լիսաբոն, Պորտուգալիայի Հանրապետություն, 2017թ. սեպտեմբերի 21-ից 22-ը

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, Պորտուգալիայի Հանրապետության աշխատանքի, համերաշխության և սոցիալական ապահովության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կայուն հասարակություն բոլոր տարիքի անձանց համար. երկարակեցության ներուժի իրացումը» խորագրով նախարարական համաժողովին:

Քննարկված թեմաները

Համաժողովի հիմնական նպատակը Ծերացման հիմնահարցերի մադրիդյան միջազգային գործողությունների պլանի երրորդ վերանայումն էր, որը հաստատվել է 2002 թվականին և ընդունվել ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի բոլոր անդամ պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից: Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ կազմակերպվում է նախարարական համաժողով, որտեղ քննարկվում են անդամ պետությունների կողմից փաստաթղթի իրականացման ուղղությամբ արձանագրած ձեռքբերումները, առկա մարտահրավերները և հետագա անելիքները:

Համաժողովի առաջին օրն անցկացվեցին երեք նիստեր՝

- «Տարեց անձանց ներուժի ճանաչում»
- «Առավել երկար աշխատանքային կյանքի խթանում»,
- «Արժանապատիվ ծերացման ապահովում»:

Երկրորդ օրն անցկացվեցին երկու նախարարական նիստեր վերոնշյալ թեմաներով, և տեղի ունեցավ քննարկում նախարարների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի բացմանը մասնակցում էին Պորտուգալիայի Հանրապետության աշխատանքի, համերաշխության և սոցիալական ապահովության նախարարը, ով նաև վարում էր համաժողովը, առողջապահության նախարարը և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարը:

Համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Պորտուգալիայի Հանրապետության նախագահը:

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը ներկայացրեց Ծերացման հիմնահարցերի մադրիդյան միջազգային գործողությունների պլանի իրականացման հաշվետվությունը՝ 2012-2017թթ. ժամանակահատվածի համար, որը մշակվել էր անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների հիման վրա:

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարն իր ելույթում անդրադարձ կատարեց ՀՀ կառավարության կողմից իրենց կառույցի հետ համագործակցությամբ մշակված Ծերացման հիմնահարցերի լուծման ճանապարհային քարտեզին, որը տարածաշրջանում առաջին փորձն էր և հետագայում հիմք հանդիսացավ նմանանատիպ փաստաթղթի մշակման համար Վրաստանում և Մոլդովայում:

Համաժողովի ընթացքում՝ «Արժանապատիվ ծերացման ապահովում» խորագրով նախարարական նիստի ժամանակ ելույթով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը՝ ներկայացնելով ծերացման հիմնահարցերի հետ կապված Հայաստանում առկա իրավիճակը, ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը և ընթացիկ բարեփոխումները (ելույթը կցվում է):

Ծերացման հիմնախնդիրները դիտարկվում են հիմնականում հետևյալ տեսանկյուններից.

- Տարեց անձանց իրավունքների պաշտպանություն
- Տարեց անձանց հասարակություն ներառման ապահովում, «ակտիվ ծերացում»
- Տարեց անձանց որպես ռեսուրս, այլ ոչ թե որպես «բեռ» դիտարկելու <u>սկզբունքի ապահովում, այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկում:</u>

<u>Այս առումով անհրաժեշտ</u> է ձեռնարկել քայլեր՝ իրականացվող համապատասխան քաղաքականություններն առավել նպատակային մշակելու և իրականացնելու ուղղությամբ: Առաջավոր երկրների փորձը և համաժողովի ընթացքում տեղի ունեցած

քննարկումները փաստում են, որ այս ոլորտում արձանագրված հաջողությունները հիմնականում պայմանավորված են հետևյալ ուղղություններով կատարված աշխատանքներով.

1. **Տարեց անձանց համար առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության ապահովում**, ինչը հնարավորություն է տալիս խուսափել հետագա առողջական վատթարացումներից, և հետևապես նաև պետության համար լրացուցիչ ծախսերից:

   Առողջ տարեցները կարող են հոգալ իրենց կարիքները, լինել աշխատաշուկայում ակտիվ, ինչը ենթադրում է բեռի թեթևացում և՛ պետության, և՛ ընտանիքների համար:

   Ընտանիքում հիվանդ տարեցի խնամքը սահմանափակում է ընտանիքի անդամների լիարժեք աշխատելու հնարավորությունը, բերում է լրացուցիչ ծախսեր ընտանիքի համար, ինչն իր հերթին անդրադառնում է ընտանիքի սոցիալական վիճակի վրա և հաճախ պատճառ դառնում սոցիալական պաշտպանության համակարգ ընդգրկվելու համար: Սա իր հերթին ավելացնում է պետության սոցիալական ծախսերը:

   Առողջական խնդիրները խոչընդոտում են նաև տարեց անձանց անկախ ապրելուն, հասարակությանը լիարժեք ինտեգրվելուն, աշխատունակությունը պահպանելուն/աշխատաշուկայում ընդգրկված լինելուն, ունեցած կարողություններն օգտագործելուն, ինչն իր հերթին խոչընդոտում է տարեց անձանց իրավունքների իրացմանը, հնարավոր տնտեսական արդյունքի ստացմանը, եկամուտների ստեղծմանը:

2. **Տարեց անձանց կրթության ապահովում՝** ողջ կյանքի ընթացքում կրթության և կարճատև վերապատրաստումների/վերարտակավորումների միջոցով, ինչը հնարավորություն կտա ապահովելու տարեց անձանց ներգրավումն աշխատաշուկա:

3. **Տարեց անձանց ավելի երկար աշխատանքային կյանքի ապահովում,** ինչը նպաստում է տարեց անձի ակտիվության պահպանմանը, իրավունքների իրացմանը, կարողությունների օգտագործմանը, պետության սոցիալական ծախսերի կրճատմանը: Աշխատաշուկայում ընդգրկվածության դեպքում կիրառվում է **«մասնակի զբաղվածություն-մասնակի կենսաթոշակ» սկզբունքը**: Այս առումով կարևորվում է համագործակցությունը սոցիալական գործընկերների, հատկապես գործատուների միությունների հետ՝ հստակեցնելու համար տնտեսության այն ճյուղերը, որտեղ հնարավոր է ապահովել տարեցների մասնակցությունը, գործատուի պահանջներին համապատասխան իրականացնել տարեց անձանց վերապատրաստումներ:

4. **Սոցիալական այլընտրանքային ծառայությունների** (ցերեկային կենտրոններ, ծերապարտեզներ, տնային խնամք) համակարգի ներդրում, ինչը կնպաստի տարեց անձանց սոցիալական իրավունքների իրացմանը, «ակտիվ ծերացման» սկզբունքի ապահովմանը, շուրջօրյա խնամքի ծառայությունների կարիքի նվազմանը, ընտանիքների հոգսի թեթևացմանը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի արդյունքում ընդունվեց Նախարարական Հռչակագիր (կցվում է), որը մատնանշում է ծերացման հիմնահարցերի ոլորտում առաջիկա տարիների առաջնահերթությունները և վերահաստատում է անդամ պետությունների պարտավորությունները՝ Ծերացման հիմնահարցերի մադրիդյան միջազգային գործողությունների պլանի կատարման ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը սեպտեմբերի 21-ին առանձին հանդիպում է ունեցել նաև Սոցիալական ապահովության քաղաքականության և հետազոտությունների Եվրոպական կենտրոնի գործադիր տնօրեն Կայ Լայխզենրինգի հետ: Քննարկվել են նախարարության և Եվրոպական կենտրոնի հետ համագործակցության հետ կապված հարցերը:

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «Զբաղվածության և սոցիալական քաղաքականության ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիրը (կցվում է):

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

1. Տարեց անձանց համար առողջապական ծառայությունների որակի և մատչելիության բարելավման հետ կապված հարցերը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կքննարկի ՀՀ առողջապահության նախարարության հետ՝ ներկայացնելով համաժողովի արդյունքները:
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սոցիալական գործընկերների հետ կքննարկի տարեց անձանց՝ աշխատաշուկայում ընդգրկվելու հնարավորության հարցերը, մասնավորապես՝ առաջարկելով հստակեցնել տնտեսության այն ճյուղերը, որտեղ տարեց անձանց

ներգրավումը կլինի արդյունավետ և նպատակային, ինչպես նաև այս համատեքստում կդիտարկվի տարեց անձանց ուսուցման/վերապատրաստման հնարավորության հարցերը:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կհամագործակցի ոլորտում գործող գործընկեր կազմակերպությունների հետ՝ տարեց անձանց սոցիալական այլընտրանքային ծառայությունների ստեղծման հնարավորությունները քննարկելու նպատակով:
4. Վերոնշյալ նախաձեռնությունների շրջանակներում նախարարությունը լրացուցիչ կուսումնասիրի միջազգային լավագույն փորձը, ըստ անհրաժեշտության կներկայացնի օրենսդրական փոփոխություններ և կիրականացնի հանրային իրազեկման աշխատանքներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Ասատրյան

26.09.2017թ.